

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ



Մարզկենտրոնը՝

ք. Վանաձոր

Տարածաշրջանները՝

Սպիտակ
Ստեփանավան
Տաշիր
Թումանյան
Գուգարք

Քաղաքները՝

Վանաձոր
Ալավերդի
Ստեփանավան
Սպիտակ
Տաշիր
Ախթալա
Թումանյան
Շամլուղ

Տարածքը	3 799 քառ. կմ
Հայաստանի Հանրապետության տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը, %	12.8
Համայնքներ, 2019թ. տարեկգրի դրությամբ	56
Քաղաքներ	8
Գյուղեր	122
Բնակչության թվաքանակը 2019թ. տարեկգրի դրությամբ	215.5 հազ. մարդ
<i>այդ թվում՝</i>	
քաղաքային	127.6 հազ. մարդ
գյուղական	87.9 հազ. մարդ
Հայաստանի Հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2018 թ.,%	7.3
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2018 թ.,%	59.2
Գյուղատնտեսական նշանակության հողեր	250 902.3 հա
այդ թվում՝ վարելահողեր	42 037.4 հա

Մարզում ծովի մակերևույթից բարձր կետը Աչքասար լեռան գագաթն է (3 196 մ), ամենացածրը՝ Դեբեդ գետի ստորին հոսանքի շրջանը (մոտ 375 մ):

Մարզի տնտեսության առաջատար ճյուղերը գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունն են:

Գյուղատնտեսության ոլորտում առանձնանում են հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի և անասնաբուծական մթերքի արտադրությունները:

Մարզի արդյունաբերության հիմնական ուղղություններն են հանքագործական արդյունաբերությունը և մշակող արդյունաբերությունը:

Մարզի տարածքի կենտրոնական մասով անցնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր երկաթուղին:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային, երկաթուղային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի):

2018թ. մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները Հայաստանի Հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 4.6 %,
- գյուղատնտեսություն՝ 8.2 %,
- շինարարություն՝ 4.8 %,
- մանրածախ առևտուր՝ 3.1 %,
- ծառայություններ՝ 1.2 %:

Վանաձոր քաղաքը (2019թ. տարեսկզբին՝ 78.4 հազ. բնակիչ) գտնվում է Փամբակ և Բագում լեռնաշղթաների միջլեռնային գոգավորությունում, Տանձուտ և Փամբակ գետերի միախառնման վայրում, ծովի մակերևույթից 1 350 մ բարձրության վրա: Հեռավորությունը Երևանից ավտոխճուղով 125 կմ է, երկաթուղով՝ 224 կմ: Քաղաքի միջով հոսում են Փամբակ, Տանձուտ և Վանաձոր գետերը:

Երբեմնի արդյունաբերական հզորություններով հարուստ ու միաժամանակ առողջարանային կենտրոն համարվող քաղաքն այսօր փորձում է վերագտնել իր նախկին տեսքը և վերականգնել իր նախկին համբավը:

Քաղաքում գործում են բազմաթիվ մանր ու միջին արտադրական այլ կազմակերպություններ, առավել քաղաքակիրթ ձև են ստանում առևտուրն ու ծառայությունների մատուցումը, տարբեր ֆինանսավորման աղբյուրների հաշվին կատարվում են բնակարանային և արդյունաբերական շինարարության աշխատանքներ:

Սպիտակ քաղաքը (2019թ. տարեսկզբին՝ 12.7 հազ. բնակիչ) գտնվում է Փամբակ գետի ափին, Երևանից 97 կմ, իսկ մարզկենտրոնից 20 կմ հեռավորության վրա: Զբաղեցնում է 1 400 հա տարածք: Քաղաքով են անցնում Երևան-Թբիլիսի միջպետական նշանակության ճանապարհն ու երկաթուղին:

Սպիտակ քաղաքը մինչև 1988թ. արդյունաբերական կենտրոններից էր: Քաղաքում գործում էին հանրապետության միակ շաքարի գործարանն ու վերելակաշինական գործարանը: Ներկայում քաղաքում գործում են փոքր ու միջին արտադրական կազմակերպություններ, բնակչության մի մասը զբաղված է գյուղատնտեսության ոլորտում:

Ստեփանավան քաղաքը (2019թ. տարեսկզբին՝ 12.5 հազ. բնակիչ) զբաղեցնում է 1 666 հա տարածք, գտնվում է ծովի մակերևույթից 1 375 մ. բարձրության վրա: Քաղաքով է անցնում Երևան-Թբիլիսի միջպետական նշանակության ճանապարհը: Քաղաքը գտնվում է Երևանից 139 կմ, Վանաձորից՝ 24 կմ հեռավորության վրա:

Քաղաքում գործել են արտադրական մանր ու մի-ջին մի քանի կազմակերպություններ, որոնք զբաղվել են սննդի, կահույքի և էլեկտրասարքերի արտադրությամբ:

Տաշիր քաղաքը (2019թ. տարեսկզբին՝ 7.3 հազ. բնակիչ) հիմնադրվել է 1834թ.՝ որպես ռուսական աքսորավայր և կոչվել է Վորոնցովկա, հիմնականում ապրել են ռուսներ: 1991թ. վերանվանվել է Տաշիր: Քաղաքով է անցնում Երևան-Թբիլիսի միջպետական նշանակության ավտոճանապարհը: Տաշիր քաղաքը գտնվում է Երևանից 156, Վանաձոր քաղաքից՝ 42 կմ հեռավորության վրա:

Քաղաքում գործում են կաթի վերամշակմամբ զբաղվող մի քանի կազմակերպություններ, որոնց արտադրած կաթնամթերքը (պանիր, կարագ) լայն սպառում ունի ոչ միայն հանրապետությունում, այլև հանրապետությունից դուրս:


Ալավերդի քաղաքը (2019թ. տարեսկզբին՝ 12.6 հազ. բնակիչ) գտնվում է Դեբեդ գետի ափին (Երևանից 162 կմ, Վանաձորից՝ 47 կմ հեռավորության վրա): Քաղաքը ձևավորվել է պղնձաձուլական գործարանի կառուցումից հետո: Վերագործարկված պղնձաձուլական արտադրությունը գործում է նաև այսօր:

Ախթալա քաղաքը (2018թ. տարեսկզբին՝ 2.0 հազ. բնակիչ) գտնվում է Դեբեդի ձախ ափին (Երևանից 186 կմ հեռավորության վրա), լեռնային դարավանդի վրա: Քաղաքի արդյունաբերությունը մասնագիտացած է հանքագործական արդյունաբերությունում (արտադրվում է պղնձի խտանյութ):

Թումանյան քաղաքը (2019թ. տարեսկզբին՝ 1.5 հազ. բնակիչ) գտնվում է Դեբեդի աջ ափին (Երևանից 148 կմ, Վանաձորից՝ 42 կմ հեռավորության վրա): Հետպատերազմյան շրջանում տեղական հումքի բազայի վրա կառուցվել է հրակայուն աղյուսի գործարան, որի շուրջն էլ ձևավորվել է ներկայիս Թումանյան քաղաքը:

Շամլուղ քաղաքը (2019թ. տարեսկզբին՝ 0.6 հազ. բնակիչ) գտնվում է Դեբեդ գետի ձախ ափին (Երևանից 196 կմ, Վանաձորից՝ 63 կմ հեռավորության վրա): Հայտնի է պղնձի, արծաթի հանքավայրերով և համարվել է հանքաշահագործման կարևորագույն կենտրոններից մեկը Հարավային Կովկասում:

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԵՌԱՏԱՐԻՔԱՅԻՆ ԲՈՒՐԳԸ,
2019թ. հունվարի 1-ի դրությամբ**



ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ

	Քանակը				
	2014	2015	2016	2017	2018
Մանրածախ առևտրի օբյեկտներ, ընդամենը	939	1 002	1 010	844	677
<i>այդ թվում՝</i>					
խանութներ	271	324	331	304	291
կրպակներ	623	594	597	459	305
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	2	2	2	2	2
սպառողական ապրանքների շուկաներ	3	3	3	3	3
առևտրի այլ օբյեկտներ	40	79	77	76	76

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	Քանակը				
	2014	2015	2016	2017	2018
Պետական նախադպրոցական	64	66	66	94	94
Պետական հանրակրթական	167	166	166	163	163
Ոչ պետական հանրակրթական	1	-	-	-	-
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	17	20	20	21	24
Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական ¹	4	4	4	4	4
Պետական միջին մասնագիտական ուսումնական	8	8	8	9	9
Ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական	1	1	1	1	2
Պետական բարձրագույն ուսումնական	1	1	1	1	1
Պետական բարձրագույն ուսումնական հաստատության մասնաճյուղ	2	2	2	2	2
Ոչ պետական բարձրագույն ուսումնական	1	1	1	1	1

ՔԱՂԱՔՆԵՐ

Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ²
Վանաձոր	78 386
Այվազ	12 641
Ստեփանավան	12 446
Սպիտակ	12 733
Տաշիր	7 271
Ախթալա	1 992
Թումանյան	1 507
Շամլուղ	609

¹ Ներառյալ այն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք իրականացնում են նախնական (արհեստագործական) ծրագիր:

² Հայաստանի Հանրապետության քաղաքների բնակչության թվաքանակը ներկայացված է Հայաստանի Հանրապետության 2011թ. մարդահամարի հիմքով վարվող բնակչության ընթացիկ հաշվառմամբ:

ԳՅՈՒՂԵՐ

Անվանումը		Մշտական բնակչության թվաքանակը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ¹
Գուգարքի տարածաշրջան		
1	Ազնվածոր	467
2	Անտառամուտ	300
3	Անտառաշեն	24
4	Արջուտ	1 217
5	Արջուտ կայարանին կից	57
6	Բագում	1 410
7	Գուգարք	5 664
8	Գյուլլուդարա	-
9	Դարպաս	1 828
10	Դեբետ	836
11	Եղեգնուտ	805
12	Լեռնապատ	1 973
13	Լերմոնտովո	862
14	Հալավար	90
15	Հայդարլի	11
16	Ձորագետ	232
17	Ձորագյուղ	249
18	Մարգահովիտ	3 371
19	Շահումյան	2 685
20	Վահագնածոր	334
21	Վահագնի	1 094
22	Փամբակ	271
23	Փամբակ կայարանին կից	43
24	Քիլիսա	-
25	Քարաբերդ	80
26	Ֆիոլետովո	1 266
Թումանյանի տարածաշրջան		
1	Աթան	205
2	Առողջարանին կից	17
3	Ամոջ	161
4	Բենդիկ	65
5	Ակներ	568
6	Ախթալա	11
7	Ահնիձոր	182
8	Այգեհատ	184
9	Արդվի	166
10	Արևածագ	862
11	Աքորի	2 537

¹ ՀՀ մարզերի գյուղերի այս տվյալների սկզբնաղբյուրը՝ համայնքների կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 955 գյուղական բնակավայրերի մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ ամբողջությամբ և ըստ մարզերի, ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են Արդարադատության նախարարության Քաղաքացիական կացության ակտերի գրանցման և Ոստիկանության վարչական ռեգիստրների տվյալների վրա: Ընդ որում, վերջինս վերագնահատված է ՏՏԿԱՀ արդյունքներով ստացված միգրացիայի տվյալներով (շեղումը՝ 01.01.2019թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +11.6%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գյուղերի միջև տվյալ տեղեկատվության գրանցման, փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:

	Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ¹
12	Դսեղ	2 065
13	Թեղուտ	773
14	Լորուտ	886
15	Ծաթեր	333
16	Ծաղկաշատ	186
17	Կաճաճկուտ	294
18	Քոբեր կայարանի	24
19	Կարմիր Աղեկ	143
20	Հագվի	408
21	Հաղպատ	804
22	Ճոճկան	1 981
23	Մարց	444
24	Մեծ Այրում	821
25	Մղարթ	303
26	Նեղոց	290
27	Շամուտ	220
28	Շնող	2 885
29	Չկալով	167
30	Ջիլիզա	97
31	Փոքր Այրում	228
32	Քարինջ	639
33	Քարկոփ	377
34	Օձուն	4 873
Սպիտակի տարածաշրջան		
1	Արևաշող	2 517
2	Գեղասար	931
3	Գոգարան	1 266
4	Լեռնանցք	1 475
5	Լեռնավան	1 676
6	Լուսաղբյուր	1 155
7	Խնկոյան	302
8	Ծաղկաբեր	1 433
9	Կաթնաջուր	2 018
10	Հարթագյուղ	1 362
11	Ղուրալ	559
12	Մեծ Պարնի	2 163
13	Նոր Խաչակապ	614
14	Շենավան	519
15	Շիրակամուտ	2 385
16	Ջրաշեն	3 548
17	Սարալանջ	170
18	Սարահարթ	1 340
19	Սարամեջ	1 741
20	Քարածոր	456
Ստեփանավանի տարածաշրջան		
1	Ագարակ	1 109
2	Արմանիս	344
3	Ամրակից	605
4	Բովաձոր	265

	Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ¹
5	Գարգառ	1 333
6	Գյուլագարակ	2 281
7	Լեջան	697
8	Լոռի բերդ	407
9	Կաթնաղբյուր	657
10	Կողես	330
11	Կուրթան	1 709
12	Հոբարձի	690
13	Հովնանաձոր	32
14	Յաղրան	69
15	Պուշկինո	357
16	Սվերդլով	980
17	Վարդաբլուր	1 325
18	Ուռուտ	929
19	Ուրասար	273
Տաշիրի տարածաշրջան		
1	Ապավեն	100
2	Արծնի	286
3	Բլագոդարնոյե	206
4	Գետավան	63
5	Գոգավան	47
6	Դաշտադեմ	86
7	Լեռնահովիտ	1 001
8	Կաթնառատ	1 042
9	Ջյունաշող	115
10	Ձորամուտ	297
11	Մեղովկա	355
12	Կրուգլայա շիշկա	111
13	Մեծավան	5 904
14	Մեղվահովիտ	126
15	Նորամուտ	38
16	Միխայելովկա	831
17	Նովոսելցովո	186
18	Նորաշեն	1 285
19	Պաղաղբյուր	111
20	Պետրովկա	170
21	Պրիվոլնոյե	897
22	Սարատովկա	341
23	Սարչապետ	1 559

**ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2018թ.**

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք ¹	տղամարդիկ ¹
Բնակչությունը, մարդ	10 000	5 431	4 569
Ծնվածներ, մարդ	114	55	59
Մահացածներ, մարդ	118	62	56
Ամուսնություններ	44	X	X
Ամուսնալուծություններ	19	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակավայրերում, քառ.մ	41.7	X	X
Կրթության ոլորտ, հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	238	115	123
հանրակրթական	1 391	673	718
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոց-ներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	124	87	37
նախնական մասնագիտական (արհեստագործական)	25	5	20
միջին մասնագիտական	87	47	40
բարձրագույն մասնագիտական	142	87	55
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	42 811
Մարզիկներ, մարդ	166	31	135
Զբաղվածներ, մարդ	3 251	1 517	1 734
նրանցից՝ գիտական հիմնարկներում	-	-	-
նրանցից՝ գիտության դոկտոր	-	-	-
գիտության թեկնածուներ	-	-	-
ուսուցիչներ	134	119	15
բժիշկներ	24
միջին բուժանձնակազմ	50
Գործազուրկներ, մարդ	727	223	504
Սոցիալական ապահովության ոլորտ			
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	2 012	1 259	753
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	711	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	16 699
թատրոն	1 529
համերգ	537
թանգարան
Իրավական ոլորտ	1 498		
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	76	X	X
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	36	X	X
միջին ծանրության	29	X	X
ծանր	11	X	X
առանձնապես ծանր	1	X	X

¹ Ցուցանիշները հաշվարկային են: